Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2015 թ.
օգոստոսի 18-ի N 760 - Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ

Վ. Գաբրիելյան	- ՀՀ փոխվարչապետ, ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար (խորհրդի նախագահ)
Ա. Մուրադյան	- ՀՀ առողջապահության նախարար
Գ. Ղազարյան	- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար
Կ. Անդրեասյան	- ՀՀ մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)
Պ. Սաֆարյան	- ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
Ա. Նազարյան	- ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
Ա. Թաթոյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ա. Հովակիմյան	- ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
Ս. Ավետիսյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Մ. Մկրտչյան	- ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Վ. Մելիքյան	- ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ
Ֆ. Բերիկյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Գ. Համբարձումյան	- ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ
Ա. Հարությունյան	- ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ
Գ. Եգանյան	- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայության պետ (խորհրդի քարտուղար)
Հ. Բաղալյան	- ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ (համաձայնությամբ)

Ծ. Համբարձումյան - ՀՀ Նախագահի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ (համաձայնությամբ)

Վ. Հարությունյան - ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևորագույն գործերի քննության գլխավոր վարչության պետ (համաձայնությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2015 թ.
օգոստոսի 18-ի N 760 - Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի ոլորտում շահագրգիռ պետական մարմինների ղեկավար կազմից բաղկացած հասարակական հիմունքներով գործող մարմին է:

2. Սույն աշխատակարգով սահմանվում են խորհրդի նիստերի վարման և որոշումների ընդունման կարգն ու պայմանները:

3. Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, այլ իրավական ակտերով և սույն աշխատակարգով:

4. Խորհուրդն իր գործունեությամբ հաշվետու և պատասխանատու է Հայաստանի Հանրապետության վարչապետին:

II. ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Խորհրդի նպատակներն են Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հիմնական ուղղությունների որոշումը, այդ ոլորտում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների

կողմից իրականացվող աշխատանքների ընդհանուր համակարգումը, խորհրդին կից գործող աշխատանքային խմբերի, հանձնաժողովների վերահսկումը:

6. Խորհուրդը պարբերաբար հրավիրվող իր նիստերի ընթացքում քննության է առնում և ընդունում խորհրդատվական բնույթի որոշումներ՝ հերևյալ հարցերի վերաբերյալ՝

1) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ոլորտում գործող օրենսդրության կիրառման բնագավառում՝

ա. օրենսդրական դաշտի կատարելագործում,

բ. մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի արդյունավետ իրականացում.

2) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման բնագավառում՝

ա. բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում,

բ. ոլորտին վերաբերող բնագավառներում աշխատող, ինչպես նաև բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող պետական մարմինների աշխատողների մասնագիտական գիտելիքների և իրազեկվածության մակարդակի բարձրացում,

գ. զանգվածային լրատվության միջոցների դերի և դրանց կողմից հրապարակվող նյութերի որակի բարձրացում.

3) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի պաշտպանության և աջակցության բնագավառում՝

ա. թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հայտնաբերման և նրանց անվտանգ վերադարձի կազմակերպման ապահովում,

բ. թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց անհրաժեշտ աջակցության իրականացման ապահովում:

7. Խորհուրդը քննության է առնում և Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանն է ներկայացնում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի հիմնական և պահեստային կազմերը:

8. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ ուղղված աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով խորհուրդը քննության է առնում և ընդունում խորհրդատվական բնույթի որոշումներ միջազգային, տարածաշրջանային և միջգերատեսչական հա-

մագործակցության, համապատասխան ուսումնասիրություններ կատարելու և մարդկանց թրաֆիքինգի և շահագործման երևույթի հետ առնչություն ունեցող այլ հարցերով:

9. Յուրաքանչյուր տարի, մինչև հաջորդող տարվա փետրվարի 15-ը, խորհուրդը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացնում «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում իրականացված աշխատանքների և կատարված ծախսերի վերաբերյալ տարեկան ամփոփ զեկույց:

10. Խորհրդի իրավասությունների մեջ մտնող հարցերով համապատասխան նյութերը պատրաստում և խորհրդի քննարկմանն է ներկայացնում խորհրդի ընթացիկ աշխատանքը կազմակերպելու նպատակով ստեղծված աշխատանքային խումբը:

III. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Խորհրդի կազմը և աշխատակարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

12. Խորհուրդը կազմված է նախագահից, անդամներից և քարտուղարից, որոնք խորհրդի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

13. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են խորհրդի նախագահի կողմից, ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ: Ըստ անհրաժեշտության, խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

14. Խորհրդի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին:

15. Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ խորհրդի անդամներից մեկը:

16. Խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, նիստի մասնակիցների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

17. Խորհրդի նիստի օրակարգը կազմվում և համապատասխան փաստաթղթերով տրամադրվում է խորհրդի նախագահին և անդամներին՝ գումարվող նիստից առնվազն 2 օր առաջ:

18. Խորհրդի նիստերն սկսվում են նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին զեկուցմամբ:

19. Խորհրդի որոշումները հաստատում է խորհրդի նախագահը:

20. Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է աշխատանքային խմբի ղեկավարը, իսկ դիտորդական կարգավիճակով կարող են մասնակցել նաև շահագրգիռ պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները:

IV. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

21. Խորհրդի նախագահը՝

1) ղեկավարում է խորհրդի գործունեությունը.

2) նշանակում է խորհրդի նիստի անցկացման օրը, վայրը և հաստատում օրակարգը.

3) հրավիրում և վարում է խորհրդի նիստերը կամ նիստի վարումը հանձնարարում է խորհրդի անդամներից մեկին.

4) հաստատում է խորհրդի որոշումներն ու զեկույցները.

5) հաստատում է խորհրդի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի անհատական կազմը և աշխատակարգը.

6) խորհրդի անունից գործընկեր հասարակական կազմակերպությունների հետ ստորագրում է փոխըմբռնման հուշագիր.

7) ներկայացնում է խորհուրդն այլ մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում:

V. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

22. Խորհրդի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. հարցեր ընդգրկելու խորհրդի օրակարգում կամ դրանք ներկայացնելու խորհրդի քննարկմանը,

բ. առաջարկություններ ներկայացնելու խորհրդի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ,

գ. խորհրդի որոշումների վերաբերյալ ներկայացնելու հատուկ կարծիք,

դ. ծանոթանալու խորհրդի նիստերի արձանագրություններին.

2) պարտավոր են՝

ա. մասնակցել խորհրդի աշխատանքներին,

բ. կատարել խորհրդի որոշումները և խորհրդի նախագահի հանձնարարականները:

VI. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

23. Խորհրդի քարտուղարը՝

1) արձանագրում է խորհրդի նիստերը և կազմում խորհրդի որոշումների և զեկույցների նախագծերը.

2) նախապատրաստում է խորհրդի նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերը և կազմակերպում նյութերի տրամադրումը խորհրդի անդամներին.

3) հետևում է խորհրդի որոշումների կատարմանը և խորհրդի նիստերում զեկուցում դրանց կատարման ընթացքի մասին.

4) վարում է խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

5) իրականացնում է խորհրդի և խորհրդի նախագահի հանձնարարականները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2015 թ.
օգոստոսի 18-ի N 760 - Ա
որոշման

Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

ՀՀ արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության պետ (աշխատանքային խմբի ղեկավար)

ՀՀ կառավարության աշխատակազմի ներկայացուցիչներ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ներկայացուցիչ (համաձայնությամբ)

ՀՀ ազգային անվտանգության խորհրդի ներկայացուցիչ (համաձայնությամբ)

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական գործակալության պետի տեղակալ

ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչ

ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ

ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչ

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության ներկայացուցիչ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներկայացուցիչ

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ներկայացուցիչ

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ

ՀՀ գլխավոր դատախազության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

ՀՀ քննչական կոմիտեի ներկայացուցիչ (համաձայնությամբ)

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ներկայացուցիչ

ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչ

ՀՀ սփյուռքի նախարարության ներկայացուցիչ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության ներկայացուցիչ

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչ
(համաձայնությամբ)

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ներկայացուցիչ
(համաձայնությամբ)

Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչ
(համաձայնությամբ)

ՀՀ արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի ներկայացուցիչ (աշխատանքային խմբի քարտուղար)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ